նկատմամբ սահմանափակումները, այդ թվում՝ սերմնավորումները)

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Ճարտարապետահատկազգծային պահանջներ

**ղեկավարվել ՀՀ գործող նորմերին
համապատասխան ըստ միջավայրի պայմանների**

(եղևիվ Հայաստանի Հանրապետության օրենսդրության և
տրամադրված ինժեներական փաստաթղթերի պահանջներից, առկա
քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի դրույթներից կամ դրա
բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող)
քաղաքաշինական միջավայրի պայմաններից)

օբյեկտի հեռավորությունը կարմիր գծից

Ապահովել փողոցի կառուցապատման գիծը

հեռավորությունը հարևան հողակտորներից
(օբյեկտներից)

թույլատրելի բարձրությունը

**շինությունների առավելագույն բարձրությունը
մինչև 5**

կառուցապատման խտությունը (կառուցի
(կառուցյցների) ընդհանուր մակերեսի
հարաբերությունը հողամասի մակերեսին

մինչև 1

կառուցապատման տոկոսը (կառուցապատվող
(անջրանցիկ) տարածքի հարաբերությունը
հողամասի մակերեսին՝ տոկոսներով (%)

մինչև 50

կանաչապատման տոկոսը (կանաչապատ
տարածքի հարաբերությունը հողամասի
մակերեսին՝ տոկոսներով (%)

մինչև 0

այլ պահանջներ

տարածքում տեղադրել ինֆորմացիոն վահանակ

Հողամասում գտնվող շենքերի ու շինությունների
քանդման կամ տեղափոխման պայմանները և
աշխատանքների հերթականությունը

Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի
տարածքների օգտագործման պայմանները

Ինժեներական սարքավորումներ, ցանցեր

ջրամատակարարում

կոյուղի

տաք ջրամատակարարում

էլեկտրամատակարարում

գազամատակարարում

թույլ հոսանքներ

աղբահանում

Տարածքի ինժեներական նախապատրաստում

Բարեկարգում

Շինարարական նյութեր

Պաշտպանական կառույցներ

Հակահրդեհային պահանջներ

Հաշմանդամների և բնակչության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ

Շրջակա միջավայրի պահպանում

**Ինժեներական ցանցեր և սարքավորումներ
Պահանջներ՝ գոյություն ունեցող և նախագծվող
ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ
համաձայնեցնել իրավասու
կազմակերպությունների հետ**

**«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ
բաժնեպիրական ընկերություն**

**էլեկտրամատակարարում
«Հայաստանի էլեկտրական
ցանցեր» ՓԲԸ, «գեղամա»
մասնաճյուղ, «Նաիրի»
էլեկտրական ցանցեր
Կցվում է «Հայաստանի
էլեկտրական
ցանցեր» ՓԲԸ, «գեղամա»
մասնաճյուղ**

պահանջներ
գոյություն

ունեցող և
նախագծվող
ենթակառուց-
վածքների և ցանցերի
նկատմամբ

20/քսան/

**Կնքել համապատասխան
պայմանագիր աղբահանություն
կազմակերպող իրավասու
կազմակերպության հետ**

չի պահանջվում

(ոնլինֆի կազմակերպման, ջրահեռացման, ինժեներական
պաշտպանության միջոցառումները)

**ապահովել հարակից փարածքի մաքրությունը,
կանաչապատումը, բարեկարգումը**

(լանդշաֆտային պլանավորման վերաբերյալ պահանջները,
կանաչապատում, ճարտարապետական փորձեր, ցանկապատում
գովազդ և այլն)

**Քար, Երկաթ/բետոն, փուֆ, բազալտ,
կոպրափաշ քարե շար, մեփաղ, ապակի, փայտ,
ավազ, թիթեղ և այլն ըստ համաձայնեցված
նախագծի**

(շինարարական նյութերի օգտագործման վերաբերյալ
առաջարկությունները)

**շինարարության ընդացքում ցանկապատել
փարածքը և ստեղծել անհրաժեշտ այլ
պաշտպանական միջոցներ**

(արվակարգ իրավիճակներում մարդկանց և օբյեկտների
պաշտպանության միջոցառումները)

**ապահովել հակահրդեհային նորմատիվ
պահանջները**

(հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

**ապահովել հաշմանդամների և բնակչության
սակավաշարժ խմբերի համար փորձասպորտային
ինժեներական ենթակառուցվածքների
մատչելիությունը**

**չիրականացնել վրանգառոր միջոցառումներ, որը
կթողնի բացասական ազդեցություն շրջակա
միջավայրի վրա, ըստ գործող նորմերի_**

(շրջակա միջավայրը վրանգավոր ազդեցությունից բացառելու միջոցառումները)

Ճանապարհի երթևեկելի մասում չստեղծել երթևեկությանը խոչնդուող հանդիսացող պայմաններ

(առաջարկություններ շինարարության հետ կապված անբարենպաստ ազդեցության բացառման, քաղաքային տնտեսության և տրանսպորտ-անխափան աշխարհանքի ապահովման վերաբերյալ)

Շինարարության կազմակերպում

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը

ներկայացվող պահանջներ

Միջանկյալ համաձայնեցում

Հասարակական քննարկումներ

Համաձայնեցումներ

Առաջադրանքի գործողության ժամկետը

Այլ պայմաններ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակը կամ նախագծողի նրաշխատակցի/իրը՝ հղող կարգաթիվը համապատասխան իրավական ակտի վրա)

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(իրավասու մարմնի հետ կամ քաղաքաշինական խորհրդում նյութերով նախնական համաձայնեցում)

ՀՀ կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի թիվ 660 որոշման պահանջների համաձայն

(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով)

Նախագիծը համաձայնեցնել Նոր Գեղի համայնքապետարանի հետ և ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման անհրաժեշտության դեպքում պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել ԿՎԿԿ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ՝ մինչև նախագծային աշխատանքներն սկսելը

(Նշվում են ԿՎԿԿ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների և բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ)

15/12/2020-ից մինչև 15/12/2021-ը

(նշվում է առաջադրանքի գործողության ժամկետը)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



Handwritten signature in blue ink.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020թվականի N 452

**ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՄԱՏԻՆՅԱՆ ԷՂԳԱՐ ԲՈՐԻՍԻ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ 908
 ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅԱՄԲ
 ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Քաղաքացիական օրենսգիրքի>> 466-րդ հոդվածի, <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Մատինյան Էղգար Բորիսի դիմումը՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքապետարանի ու Մատինյան Էղգար Բորիսի միջև 2011 թվականի ապրիլի 26-ին կնքված 908 վարձակալության պայմանագիրը փոխադարձ համաձայնությամբ լուծել:
2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ լուծարումը գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
 գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020թվականի N 453

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍԾԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կարեն Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0073-0014 և 07-048-0073-0015/ հողամասերի միավորումից առաջացած հողամասին տրամադրել հասցե՝

Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Շուշիի փողոց թիվ 3:

2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ հասցեի գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2020թվականի N 454

**ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի 10-րդ կետը և 13-րդ կետի բ) ենթակետի պահանջներով՝ որոշում եմ

1. Կարեն Հայրապետյանին սեփականության իրավունքով պատկանող 07-048-0071-0024 կադաստրային ծածկագրով և 07-048-0071-0025 ծածկագրով հողամասերի միավորումից առաջացած հողամասին տրամադրել միասնական հասցե՝ Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Զորավար Անդրանիկի փողոց թիվ 4:
2. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Զորավար Անդրանիկի փողոց թիվ 4 հողամասում Կարեն Հայրապետյանի կողմից ինքնակամ կառուցված 170,8քմ արտաքին մակերեսով ավտոտնակը, 337,59քմ արտաքին մակերեսով կիսանկուղը, 36,72 քմ մակերեսով ծածկոցը (ծածկի համար՝ ըստ ՀՀ կառավարության 2015թ մարտի 15-ի N 596 որոշման III բարեկարգման աշխատանքներ բաժնի 8-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջների համաձայն գումար չգանձել) և 2,16 քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական:
3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը շինությունների օրինականացման համար Նոր Գեղի համայնքապետարանի 900115104128 հաշվեհամարին պետք է վճարի 643293 /վեց հարյուր քառասուներեք հազար երկու հարյուր իննսուներեք / ՀՀ դրամ:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 16
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 455

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 11-ի N75 որոշումը, որոշում եմ՝

1. Նոր Գեղի համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0035-0014/ 0,01868 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 17
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020 թվականի N 456

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 11-ի N75 որոշումը, որոշում եմ՝

1. Նոր Գեղի համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0035-0016/ 0,00585 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասի գործառնական նշանակությունը փոխել հասարակական կառուցապատման հողատեսքի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 17
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

17 դեկտեմբերի 2020թվականի N 457

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Էղիկ Սմբատի Համբարձումյանին, Գոհարիկ Սուրենի Խաչատրյանին, Ալինա Էղիկի Համբարձումյանին, Էդգար Էղիկի Համբարձումյանին, Էմիլ Էղիկի Համբարձումյանին /սեփ. վկայական՝ 467266/ համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասին տրամադրել հասցե՝

Կոտայքի մարզ, Նոր Գեղի համայնք, Թումանյան փողոց թիվ 27 հողամաս:

2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ հասցեի գրանցում կատարելու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 17
 գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 դեկտեմբերի 2020թվականի N 458

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի Ն 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով «Ստյոպա Աբգարյան» ԱԶ-ի կողմից տրամադրված հատակագծերը՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի Թումանյան փողոց 27 հասցեում գտնվող, Էդիկ Սմբատի Համբարձումյանին, Գոհարիկ Սուրենի Խաչատրյանին, Ալինա Էդիկի Համբարձումյանին, Էդգար Էդիկի Համբարձումյանին, Էմիլ Էդիկի Համբարձումյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0096-0012/ 0.079 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված 84,28 քմ արտաքին մակերեսով նկուղը համարել օրինական:

2. Շինությունը կառուցված է մինչև 2001թ., ուստի օրինականացման համար գումար չի գանձվում:

3. Ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 դեկտեմբերի 2020թվականի N 459

ԱՐՄԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ԻՐ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԻ ՄԱՍՆԱԲԱԺԻՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական օրենսգրքի» 36-րդ և 39-րդ հոդվածների պահանջներով, հիմք ընդունելով Նոր Գեղի համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 23.12.2020թ. նիստի արձանագրությունը և Նոր Գեղի համայնքի Աղբյուրակի փող. 1նրբ. տուն 8 հասցեի /փաստացի բնակվում է այս հասցեում, հաշվառում չունի/ բնակիչ Արմինե Սարգիսի Սարգսյանի /ծնված 15.08.1983, անձն. AT0405888/ 23.12.2020թ. N 1158 դիմումը, որոշում եմ՝

1. Թույլ տալ քաղաքացի Արմինե Սարգիսի Սարգսյանին վաճառել Նոր Գեղի համայնքում գտնվող 0.1502 հա մակերեսով /կադաստրային ծածկագիր 07-048-0413-0011/ հնդավոր այգու՝ իր անչափահաս երեխաներ Վահե Ալբերտի Աճեմյանի /ծնված 10.01.2007թ., ծննդյան վկայական ԱԱ141663/ և Մկրտիչ Ալբերտի Աճեմյանի /15.07.2011թ., ծննդյան վկայական ԱԲ1424431/ մասնաբաժինը: Ստացված հասույթն օգտագործել անչափահաս երեխաների կրթության, խնամքի և ապրուստի միջոցների համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմինե Սարգիսի Սարգսյանին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 23
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2020թվականի N 460

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 8-Ի N 439 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Դեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի պահանջներով՝ որոշում եմ.

1. Համայնքի ղեկավարի 2020 թվականի դեկտեմբերի 8-ի «ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՒՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N439 որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը.

1.1 «Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.01513 հա մակերեսով, 07-048-0451-0063 կադաստրային համարի 0.01513հա հողամասը 444 822 դրամ (չորս հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր քսաներկու) դրամ արժեքով ուղղակի վաճառքով օտարել Ռոբերտ Էդուարդի Հակոբյանին» նախադասությունը փոխարինել «Նոր Գեղի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.01513 հա մակերեսով, 07-048-0451-0063 կադաստրային ծածկագրով 0.01513հա հողամասը 444 822 դրամ (չորս հարյուր քառասունչորս հազար ութ հարյուր քսաներկու) արժեքով ուղղակի վաճառքով օտարել Ռոբերտ Էդուարդի Հակոբյանին, որպեսզի վերջինս ընդլայնի սեփականության իրավունքով իրեն պատկանող /07-048-0121-0055/ կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հողամասը» նախադասությամբ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 24
գ. Նոր Գեղի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2020թվականի N 461

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵՈՒ ԵՎ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-Ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի 10-րդ կետի և 14-րդ կետի պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով «Ստյոպա Աբգարյան» ԱԶ-ի կողմից տրամադրված հատակագծերը և Սերժիկ Մանուկյանի դիմումը՝ որոշում եմ՝

1. Սերժիկ Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող գույքերի /կադաստրային ծածկագրեր 07-048-0054-0272 և 07-048-0054-0213/ միավորումից առաջացած գույքին տալ հասցե՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք, Ֆրոնտիկ Թևոսյան փողոց 108/3:
2. Սեփականության իրավունքով Սերժիկ Մանուկյանին պատկանող՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Ֆրոնտիկ Թևոսյան փողոց 108/3 հասցեում ինքնակամ կառուցված 78քմ արտաքին մակերեսով շինությունը (առևտրի սրահ) ճանաչել օրինական:
3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը շինության օրինականացման համար Նոր Գեղի համայնքապետարանի 900115104128 հաշվեհամարին պետք է վճարի 327600 /երեք հարյուր քսանյոթ հազար վեց հարյուր/ դրամ:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2020թվականի N 462

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի և քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ գլխի 33-րդ կետի պահանջներով՝ որոշում եմ՝

1. Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 07-048-0051-0050 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման 0,16998 հա մակերեսով հողամասում Մերի Հարությունյանի կողմից ինքնակամ կառուցված 27.54 արտաքին մակերեսով սանհանգույցին և 35.35քմ ծածկոցին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Առողջարանային փողոց, 4-րդ փակուղի, 3/6:

2. Համարել օրինական և ճանաչել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի սեփականություն:

3. Դիմել Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտե՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Առողջարանային փողոց, 4-րդ փակուղի, 3/6 գույքի նկատմամբ Նոր Գեղի համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:

4. Սույն որոշում, ն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 24
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Նոր Գեղի, +37494900906 noregghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2020թվականի N 463

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ գլխի 10-րդ կետի և 14-րդ կետի պահանջներով ինչպես նաև «Ստյոպա Աբգարյան» ԱԶ-ի կողմից տրամադրված հատակագծերը՝ որոշում եմ

1.Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի Ոսանողական փողոց 80/9 հողամասում գտնվող, Ավետիք Կնյազյանին և Արփինե Աբրահամյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-048-0054-0138 կադաստրային ծածկագրով 0,004հա բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասում կառուցված 39,95քմ մակերեսով շինությունը (առևտրի սրահ) ճանաչել օրինական:

2.Սահմանել, որ հողամասի սեփականատերերը շինության օրինականացման համար Նոր Գեղիի համայնքապետարանի 900115104128 հաշվեհամարին պետք է վճարի 167.790 /հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր իննսուն/ դրամ:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

20 20թ. դեկտեմբերի 24
գ.Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 դեկտեմբերի 2020թվականի N 464

**ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԲՆԱԿԱՐԱՆԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՎ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հոկտեմբերի 27-ի թիվ 1765-Ա որոշմամբ համայնքի ավագանու 2008թվականի հունվարի 12-ի թիվ 1/7 որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Նոր Գեղիի համայնքային սեփականություն հանդիսացող, Երկրաբանների փողոցի 2 շենքի 2-րդ հարկում գտնվող 44,6 քմ ընդհանուր մակերեսով թիվ 21 բնակարանը անհատույց նվիրատվության պայմանագրով հատկացնել Նոր Գեղի համայնքի բնակիչ Ռուսլան Վլադիմիրի Շելլունցին /երկու անձով/:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 24
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgegli.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020 թվականի N 465

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՅԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնքում Արմեն Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող՝ 07-048-0069-0028 կադաստրային ծածկագրով հողամասին տրամադրել հասցե.

ՀՀ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Առնո Բաբաջանյան 1-ին փակուղի 20:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 28
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgegli.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020թվականի N 466

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնքում Արկադյա Սարգսի Կոլայանին և Հրաչիկ Ոստանիկի Բարախանյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող՝ 07-048-0054-0082 կադաստրային ծածկագրերով հողամասին տրամադրել հասցե.

ՀՀ Կոտայքի մարզ Նոր Գեղի Մ. Ավետիսյան փողոց 5-րդ փակուղի 5:

2. Դիմել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ դեկտեմբերի 28
գ. Նոր Գեղի

Ս



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
 ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2020թվականի N 467

**ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԳՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի 731-ն որոշմամբ հաստատված կարգի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի, 10-րդ կետի, 11-րդ կետի և 13-րդ կետի բ) պահանջներով, Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի, ինչպես նաև «ՍԿԶԲՆԱԿԵՏ» ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագծերը և Արտյոմ Մարգարյանի դիմումը՝ որոշում եմ՝

1. Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնքի վաչական տարածքում գտնվող Ռոբերտ Մարգարյանին, Անգին Մարգարյանին, Արթուր Մարգարյանին և Արտյոմ Մարգարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող գույքին տրամադրել հասցե՝ Կոտայքի մարզ Նոր գեղի Համայնք Ց.Խաչատրյան փողոց 3-րդ նրբանցք թիվ 1:
2. Ց.Խաչատրյան փողոց 3-րդ նրբանցք թիվ 1 հասցեում գտնվող՝ Ռոբերտ Մարգարյանին, Անգին Մարգարյանին, Արթուր Մարգարյանին և Արտյոմ Մարգարյանին համատեղ սեփականության իրավունքով պատկանող 07-048-0085-0001 կադաստրային ծածկագրով 0,089հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 46,13քմ մակերեսով ծածկոցը, ինքնակամ կառուցված 8,95քմ մակարեսով ծածկոցը, ինքնակամ կառուցված 37,86քմ արտաքին մակերեսով հորը, ինքնակամ կառուցված 1,13քմ մակերեսով աստիճանավանդակը, ինքնակամ կառուցված 48,07քմ մակերեսով ծածկոցը, ինքնակամ կառուցված 60,09քմ արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, ինքնակամ կառուցված 48,54քմ մակերեսով մառանը, ինքնակամ կառուցված 19,15քմ ծածկոցը, ինքնակամ կառուցված 7,34քմ մակերեսով ծածկոցը և ինքնակամ կառուցված 8,97քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական: Ծածկոցների համար ըստ ՀՀ կառավարության 2015թ մարտի 15-ի N 596 որոշման III բարեկարգման

աշխատանքներ բաժնի 8-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջների համաձայն գումար չգանձել:

3. Սահմանել, որ հողամասի սեփականատերը շինությունների օրինականացման համար Նոր Գեղի համայնքապետարանի 900115104128 հաշվեհամարին պետք է վճարի 197.303 /հարյուր ինսունյոթ հազար երեք հարյուր երեք/ դրամ:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 28
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2020թվականի N 468

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի Ն 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով <<ՍԿՁԲՆԱԿԵՏ>> ՍՊ-ի կողմից տրամադրված հատակագիծերը և Խորեն Խաչատրյանի դիմումը որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի Չարենցի փողոց թիվ 54 հասցեում գտնվող, սեփականության Խորեն Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0093-0011/ 0.10127 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված 15.23քմ պարիսպը համարել օրինական:

2. Պարտավորեցնել Խորեն Խաչատրյանին ինքնակամ շինությունների օրնականացման համար համայնքի բյուջեի հետևյալ 900115104128 հաշվեհամարին վճարել 19189 դրամ (տասնըինը հազար հարյուրութսունինը) դրամ:

3. Ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 29
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2020թվականի N 469

ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերի՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0451-0050-ից/ 0,16998 հա մակերեսով հողամասի բաժանումից առաջացած հողամասերին տրամադրել հասցեներ ըստ բաժանման սխեմայի՝

1.1. S1 բաժանվող մասին՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Առողջարանային փողոց 4-րդ փակուղի 3/7:

1.2. S2 բաժանվող մասին՝ Կոտայքի մարզ Նոր Գեղի համայնք Առողջարանային փողոց 4-րդ փակուղի 3/6:

2. Դիմել ՀՀ կադաստրի կոմիտե՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 29
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ
ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mra.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2020թվականի N 470

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով <<ԱՐԴԻԼԻՍ>> ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագծերը՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի Չարենցի փողոց թիվ 40 հասցեում գտնվող Հրաչիկ Ապրիկի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0094-0014/ 0.154 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում իր կողմից ինքնակամ կառուցված 7.4քմ մակերեսով լողավազանը, 74.7քմ արտաքին մակերեսով ամառային խոհանոցը, 31.1քմ ծածկը, 23,2քմ պարիսպը համարել օրինական: Ծածկոցների համար ըստ ՀՀ կառավարության 2015թ մարտի 15-ի N 596 որոշման III բարեկարգման աշխատանքներ բաժնի 8-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջների համաձայն գումար չգանձել:

2. Հրաչիկ Հարությունյանին ինքնակամ շինությունների օրնականացման համար համայնքի բյուջեի 900115104128 հաշվեհամարին վճարել 132678դրամ (հարյուր երեսուններկու հազար վեց հարյուր յոթանասունութ) դրամ:

3. Ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020 թ. դեկտեմբերի 29
գ. Նոր Գեղի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2020թվականի N 471

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՅՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ և 22.1-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով <<ԱՐԴԻԼԻՍ>> ՍՊԸ-ի կողմից տրամադրված հատակագծերը՝ որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի Թումանյան փողոց թիվ 12 հասցեում գտնվող, Կարեն Ռաֆիկի Շահինյանին և Անահիտ Համբարձումի Շահինյանին սեփականության իրավունքով պատկանող /կադաստրային ծածկագիր՝ 07-048-0114-0021/ 0.07900 հա բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասում իրենց կողմից ինքնակամ կառուցված 12.3քմ մակերեսով հավաքունը, 4.6քմ արտաքին մակերեսով խորդանոցը և 8.0քմ արտաքին մակերեսով օժանդակ շինությունը ճանաչել օրինական:
2. Կարեն Ռաֆիկի Շահինյանը և Անահիտ Համբարձումի Շահինյանը ինքնակամ շինությունների օրինականացման համար՝ համայնքի բյուջեի 900115104128 հաշվեհամարին պետք է վճարեն 31374 դրամ (երեսունմեկ հազար երեք հարյուր յոթանասունչորս) դրամ:
3. Ինքնակամ կառուցված շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, ինչպես նաև վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին և առողջությանը: Շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgegli.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 դեկտեմբերի 2020թվականի N 472

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի N 88 որոշման պահանջով, որոշում եմ.

1. Ամանորի կապակցությամբ դրամական օգնություն համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատություններին հատկացնել՝

1) <<Նոր Գեղի թիվ 1 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ- 570 000 /հինգ հարյուր յոթանասուն հազար/դրամ

2) <<Նոր Գեղի Կառլեն Հրանտի Առաքելյանի անվան թիվ 2 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-300 000 /երեք հարյուր հազար/դրամ

3) <<Նոր Գեղի թիվ 3 նախադպրոցական ուսումնական հաստատություն>> ՀՈԱԿ-60 000 /վաթսուն հազար/դրամ

4) <<Նոր Գեղի Յ.Մ.Խաչատրյանի անվան մշակույթի կենտրոն>> ՀՈԱԿ-300 000 /երեք հարյուր հազար/ դրամ

5) <<Նոր Գեղի արվեստի դպրոց>> ՀՈԱԿ-510 000 / հինգ հարյուր տաս հազար/ դրամ

6) <<Նոր Գեղի կոմունալ տնտեսություն և բարեկարգում>> ՀՈԱԿ-300 000 /երեք հարյուր հազար/ դրամ

7) Նոր Գեղի համայնքի ավագանիներին - 160 000/հարյուր վաթսուն հազար/ դրամ

2. Նոր Գեղի հետևյալ անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ 200 000 /երկու հարյուր հազար/ դրամ, համաձայն հավելված N 1:

Ընդամենը՝ 2 400 000 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ դրամ:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ

2020թ. դեկտեմբերի 29
գ. Նոր Գեղի



Հավելված 1
Նոր Գեղի համայնքի ղեկավարի
2020 թվականի դեկտեմբերի 29 -ի
N 472 որոշման

ՑՈՒՑԱԿ

N	Ազգանուն, անուն	Գումար
1	Ավանեսյան Նատայա	40 000
2	Իսախանյան Աիդա	40 000
3	Մարգարյան Գոհար	40 000
4	Պողոսյան Նարեկ	40 000
5	Ներսիսյան Սենիկ	40 000
Ընդամենը / երկու հարյուր հազար/ դրամ		200 000



[Handwritten signature]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2020թվականի N 473

ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ (հողային օրենսգրքում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին ընդունված 2005 թվականի հոկտեմբերի 4-ին) օրենքի 23-րդ հոդվածի 8-րդ կետը և Կոտայքի մարզի առաջին ատյանի դատարանի թիվ 2-3-383 վճիռը, որոշում եմ՝

1. Վերականգնել Արկադյա Սարգիսի Կոլայանի և Հրաչիկ Ոստանիկի Բաբախանյանի սեփականության իրավունքը Նոր Գեղի համայնքի վարչական տարածքում գտնվող 07-048-0057-0082 կադաստրային ծածկագրով 0.047 հա մակերեսով արդյունաբերական ընդերքօգտագործման և այլ արտադրական օբյեկտների՝ գյուղ արտադրական օբյեկտների գույքի նկատմամբ:

2. Վերը նշված գույքի կադաստրային արժեքը, որը կազմում է 1381800 (մեկ միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր) դրամ, համայնքապետարանի 900115104128 հաշվեհամարին մուծելուց հետո ներկայացնել կադաստրի կոմիտե՝ իրավունքի պետական գրանցման:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ՆՈՐ ԳԵՂԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Գեղի համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ. Նոր Գեղի, +37494900906 norgeghi.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 դեկտեմբերի 2020թվականի N 474

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՏԿԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 24-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 24-ի N 88 որոշման պահանջով, որոշում եմ.

1. Նոր Գեղի համայնքի հետևյալ անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն՝ 130 000 /հարյուր երեսուն հազար/ դրամ, համաձայն հավելված N 1:

Ընդամենը՝ 130 000 /հարյուր երեսուն հազար/ դրամ:



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՎԱՐԴԱՆ ՊԱՊՅԱՆ



Նոր Գեղի համայնքի ղեկավարի
2020 թվականի դեկտեմբերի 30 -ի
N 474 որոշման

ՑՈՒՑԱԿ

N	Ազգանուն, անուն	Գումար
1	Լալայան Ժորա	40 000
2	Ամիրջանյան Աղվան	30 000
3	Նարինյան Սվետլանա	10 000
4	Պողոսյան Նարեկ	50 000
Ընդամենը /հարյուր երեսուն հազար/ դրամ		130 000

